

ԳԱՌՆԻԻ ԱՆՏԻՍ՝ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ԱԼԵԽԱՆԴՐ ՍԱՀԻՅԱՆ

Գառնիի տաճարը (I դ.) կործանվել է 1679-ին՝ երկրաշարժի հետևանքով: Կազմվել են նրա վերակազմության մի քանի նախագծեր՝ Ֆրեդերիկ Դյուրուա Դե Մոնպերեն 1834-ին, Կ. Ռոմանովը՝ 1912-ին, Ն. Բունիաթյանը՝ 1933-ին: Վերջին տարիների մեր ուսումնասիրություններից ստացված նոր նյութերի հիման վրա, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում կազմեցինք վերակազմության նոր նախագիծ: Նախագիծը համապատասխան հաստատություններում քննարկվելուց հետո, 1968-ի դեկտեմբերի 10-ին հաստատվեց ՀՍՍՀ կառավարության կողմից և որոշվեց այն իրականացնել:

Վերականգնումը դիտական անհրաժեշտ մակարդակով կատարելու նպատակով մշակվեց շինարարության իրականացման մեթոդիկա, որը հավանություն ստանալով հանրապետության գիտությունների ակադեմիայի գիտամեթոդական խորհրդում, հաստատվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի շինարարության պետական կոմիտեի կողմից: Այսու ներկայացնում ենք այն.

«1. Գառնիի տաճարի սկզբնական կառուցվածքից պակասող քարերը լրացնելու համար ընտրել տաճարի սկզբնական կառուցվածքի քարերի տեսակը և դույնը (Գառնիի որձաքար):

2. Հնարավոր համարել տաճարի հատակից, աստիճաններից, պատվանդանի խարիսխից ու քիվից, սյուների ու ցելլայի (նաոսի) խարիսխից պակասող մասերը լրացնել Փարաքարի քարհանքի նույն տեսակի և գույնի քարերով: Հնարավոր համարել Փարաքարի քարի օգտագործումը նաև ցելլայի և նախամուտքի թաղերի, ինչպես և որձաքարի սալիկներով (կղմինդրով) ծածկվող ընդհանուր տանիքի կառուցվածքներում:

Մինչև Փարաքարի քարի օգտագործումը, Փարաքարի և Գառնիի տաճարի սկզբնական կառուցվածքի քարերի նմուշները ներկայացնել Երևանի քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտ՝ ստուգման: Այդ քարերի համատեղ աշխատելու վերաբերյալ դրական հանձնարարական ստանալուց հետո միայն, հնարավոր համարել Փարաքարի քարի օգտագործումը:

3. Քարերի մշակումը կատարել տաճարի սկզբնական կառուցվածքի քարերի մշակման մակարդակին հավասար՝ բարձր որակով:

4. Տաճարի նոր տաշվելիք քարերը սկզբնական կառուցվածքի քարերից տարբերելու նպատակով, նորի զարդաքանդակները չանել. բավարարվել միայն տվյալ մանրամասի համապատասխան տրամատների (պրոֆիլների) քանդակումով: Տրամատների քանդակման հետևանքով՝ հին և նոր քարերից կազմված ճարտարապետական մանրամասների ընկալումը կլինի ամբողջական:

5. Այն քարերը, որոնք զարդաքանդակներ չունեն (սալահատակի և աստիճանների քարերը, ցելլայի պատի քարերը, սյան բնի (ֆուստի) քարերը,

խարիսխներ, թաղի քարեր և այլն), քարերի սրբատաշ մակերեսների աջանկյունում փորագրել ԵՃՊ Դ-Ն իբրև տարբերիչ նշան:

6. Շինարարական տեխնիկան պահպանել տաճարի սկզբնական կառուցվածքում կիրառված տեխնիկան՝ քարերը միացնել մետաղական կապերով (գամերով) և մետաղի ու քարի միացման հանգույցը լցնել կապարով:

7. Կոնստրուկտիվ անհրաժեշտության դեպքում, առանձին մասերում թաքնված ձևով օգտագործել նաև երկաթբետոն:

8. Առանձին մանրամասներից կոտրված (պակասող) կտորները, եթե կոնստրուկտիվ նշանակություն չունեն (քիվի պսակող մասի, արխիտրավի վերևի՝ ֆրիզի ուղղաձիգ մակերեսից դուրս գտնվող մասի, խոյակի վոլյուտաների կտորներ և այլն), լրացնել և միացնել մետաղական կապերով. այդպես է արվել նաև տաճարի սկզբնական կառուցման ժամանակ՝ 1-ին գարում:

Լրացումներ կատարելիս հին քարերը սպառնալից անաղարտ վիճակում:

9. Կոնստրուկտիվ նշանակություն ունեցող մանրամասները, որոնք իրենց վրա մեծ բեռ են կրում և այն աստիճան քայքայված են, որ անհնարին է նրանց օգտագործումը (խարիսխ, խոյակ, արխիտրավ, սյունասրահի առաստաղի սալեր և այլն), իբրև բացառություն փոխարինել նորով:

Ընդօրինակվող մանրամասը պահպանել՝ թանգարանում ցուցադրելու համար:

10. Կոնստրուկտիվ նշանակություն ունեցող ճարտարապետական այն մանրամասները (խարիսխ, խոյակ, արխիտրավ և այլն), որոնք կարելի է օգտագործել, հնարավոր համարել մանրամասի քայքայված-կոտրատված հատվածը ուղղաձիգ ուղղությամբ երկրաչափական ինչ-որ տեսքով (եռանկյունի, ուղղանկյունի, բազմանկյունի և այլն) հարթել և պակասող մասը նույն ձևանմուշով քանդակել ու միացնել հինին:

11. Ի նկատի ունենալով այն երևույթը, որ տաճարի հարավային ճակատի հյուսիսային ճակատի համեմատությամբ ստացել է 0,11 մետր նստվածք, երկրաբանական հետազոտության նպատակով փորել տաճարի շրջապատում և ցեյալի հարավ-արևմտյան հատվածում հետախուզահորեր (շուրֆեր) և անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար (սիլիկատադիտիկայի կամ ցեմենտի կաթի ներարկման միջոցով) ամրացնել հիմքերը:

12. Ճարտարապետական բեկորների կոտրված մասերը միմյանց կամ նոր լրացվող մասը հինն միացնելու համար, օգտագործել հատուկ բաղադրությամբ սոսինձ (այսպես կոչվող ռեպարատիվային խեժ):

13. Հակաերկրաշարժային միջոցառումների կոնստրուկցիաների հաշվումները կատարել ինր բալի համար:

Գառնիի տաճարի բնականում վերականգնման դադափսրի իրականացման սկիզբը դրվեց 1930-ական թվականներին, երբ մեծավաստակ ճարտարապետ Ն. Բունիաթյանի շահագրության ու բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակված նախագծով 1933—1934 թթ. սկսվեց տաճարի վերականգնման շինարարությունը: Ինչպես հաղորդում է այդ աշխատանքների մասնակից Կ. Հովհաննիսյանը, «աշխատանքների ղեկավարն էր պրոֆ. Ն. Գ. Բունիաթյանը, ճարտարապետ-վերականգնողը՝ Կ. Լ. Հովհաննիսյանը»¹:

¹ Կոստանտին Հովհաննիսյան, Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը Սովետական Հայաստանում, Սրեան, 1978, էջ 126:

Մինչ տաճարի վաթսուհակա՜ն-յոթանասուհակա՜ն թվականների վերականգնման աշխատանքների սկսելը ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի շինարարության պետական կոմիտեն ստեղծեց մասնագիտական հանձնաժողով, 1930-ական թվականներին կատարված մասնակի վերականգնման աշխատանքները ստուգելու համար, Հանձնաժողովի որոշմամբ հեռացվեցին երեսնական թվականներին



Նկ. 1. Գառնի. անտիկ տաճարի ընդհանուր տեսքը վերականգնումից առաջ,

ավելացված մասերը, և շինարարությունը սկսվեց հուշարձանի այն վիճակից, որպիսին գոյություն ունեւր ակադեմիկոս Ն. Մառի 1909—1911 թթ. պեղումների ժամանակ²։

² Ստորև ներկայացնում ենք հանձնաժողովի եզրակացությունը՝ ակտը.

Դառնիկի հեթանոսական տաճարի երեսնական թվականներին կատարված մասնակի վերականգնման ժամանակ բնականում շարվել են՝ ցեղայի պատերի 2—4 շարքերը, լրացվել է չորս ճակատի սյունասրահների հատակի քարերի պակասը և աստիճանների վերևից հաշված չորս շարքերը։

Սակայն վերականգնման աշխատանքներում տեղ են գտել հետևյալ թերությունները.

1. Ցեղայի պատերի առաջին շարքի շարվածքում հաշվի չի առնված ուղտերի գրաի և ներսի ճակատների քարերի միջև եղած տարբերությունը։ Դրաի ճակատների քարերի ներքևի եզրերն ունեն ելուններ, որոնք նստելով ցեղայի արտաքին ճակատներում գոյություն ունեցած խարիսխի վրա, լրացնում են վերջինի տրամատները, իսկ ներսի ճակատի քարերը մշակված են բոլորովին հարթ մակերեսով, առանց որևէ ելունի։ Վերականգնման ժամանակ արտաքին ճակատի քարերի կողքին շարվել են նաև ներսի քարերը։

2. Ցեղայի արևելյան, հարավային և արևմտյան ճակատների պատերն ունեն 0,92—0,94 մետր, իսկ Դյուսիսային ճակատի պատը 0,78 մետր հաստություն։ Վերականգնման ժամանակ բոլոր պատերը գիտվել են միահավասար՝ 0,80 մետր հաստությամբ։ Այս իսկ պատճառով, ակտդեմիկոս Ն. Մառի պեղումների ժամանակ ցեղայից իր սկզբնական տեղում միակ

Հիմնադր. Տաճարի պատվանդանի (պողիումի) տակ գտնվող ընդհանուր հիմքերի բնույթը և վիճակը պարզելու նպատակով, հետախուզահորեր (շուր-ֆեր) փորվեցին ցեղայի ներսում. որոնք ցույց տվեցին, որ տաճարը կառուցված է մեծ ամրություն ունեցող կրաքարե սյուների համատարած հարթակի վրա:

պահպանված հյուսիս-արևմտյան հանգույցի ներսի մեկ ամրոցական քարից կազմված պատի անկյունը 12—13 սմ վերևից մինչև ներքև տաշվել է:

Նույն ձևով տաշվել է նաև ցեղայի հյուսիս-արևելյան հանգույցի ներսի մեկ ամրոցական քարից կազմված պատի անկյունը և պատի այդ հաստության համեմատ շարվել ցեղայի մյուս բոլոր պատերը:

3. Անտերի շարվածքում տեղադրվել են ցեղայի ներսում գտնված պաշտվող կուռքի խորշի (նիշայի) որմնասյան քարերը:

4. Ծեղայի պատերի խարխիսից պակասող քարերի լրացման ժամանակ, քարերի մի մասը իրենց սկզբնական տեղում չեն դրված (ցեղայի խարխիսի հարավ-արևմտյան անկյան քարը և այլն):

5. Արևելյան ճակատի սյունասարհի հատակի քարերի պակասը լրացնելիս իրեն հատակի սալեր օգտագործված են՝ հատակի սալերի 0,30 մետր բարձրության շափեր ունեցող, ցեղայի պատի գոտու շարքի քարերը, Ծեղայի պատի գոտու քարերի դրսի և ներսի սրբատաշ ճակատներից մեկը՝ ընդունելով սալահատակի արտաքին ճակատի տեղ, սրբատաշ մյուս ճակատներս պել են ցեղային կից սկզբնական սալահատակի քարերին:

6. Արևելյան, հարավային և արևմտյան սյունասարհների սալահատակից պակասող քարերի մեծագույն մասը լրացվել են՝ արտաքինից կիսամաքուր տաշվածք ունեցող հին քարերով: Բնական է, որ այդ քարերն իրենց տեղերում չեն:

7. Աստիճանների՝ վերևից հաշված չորս շարքը նոր է տաշված, որոնցից վերևի մեկ շարքը շարված է նոր, իսկ ներքևի երեք շարքը՝ հին քարերից: Իայց վերջինների գրեթե բոլոր արտաքին ճակատներն ունեն կիսամաքուր տաշվածք. ճակատներում կրքեմն երևում են մետաղական կապերի համար փորված խոռոչները: Պարզ է, որ այս քարերը նույնպես իրենց տեղերում չեն:

8. Աստիճանների հյուսիս-արևմտյան անկյունում պատվանդանի քիվի շարունակությունը կազմող՝ նոր դրված քարը իր տեղում չէ. այն պատվանդանի քիվի մեկ այլ մասի բեկորն է:

Հիշատակված անկյան քարը ղտնվեց գյուղի գերեզմանատունը և ներկայումս տեղափոխվել է ամրոց:

9. Տաճարի արևելյան ատլանտի հյուսիս-արևելյան անկյան քիվը իր սկզբնականը չէ. այն պատվանդանի քիվի մեկ ուրիշ մասի բեկորն է, որի հարթ ճակատը համապատասխան մշակման է ենթարկվել և հարմարեցվել սվլալ տեղին:

10. Պատվանդանի քիվից պակասող քարերը լրացված են տաճարի նույնանման բարձրություն ունեցող քարերից, սակայն դրանց արտաքին ճակատներն ունեն կիսամաքուր տաշվածք. հասկանալի է, որ այդ քարերն իրենց տեղում չեն դրված և ժամանակին գտնվել են տաճարի կառուցվածքի այլ մասերում:

11. Իրենց տեղում չեն ատլանտների քիվերից վերև գտնվող շարքի քարերը:

12. Ոչ իրենց տեղում դրված քարեր կան նաև պատվանդանի խարխիսի հետագայում լրացված քարերի մեջ:

Տաճարի վերականգնման շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է քանդել երեսնական թվականներին կատարված նոր շարվածքներն ու առանձին լրացումները, որպեսզի ընդհանուր տաճարի սկզբնական կառուցվածքից պահպանված անաղարտ այն մասը, որը գոյություն ունի ն. Մառի պեղումներից անմիջապես հետո (տե՛ս պեղումների հրատարակված նյութերը): Մինչև նոր շարքերի հեռացումը և հեռացումից հետո ստացված վիճակը մանրամասնորեն լուսանկարել:

1. Աղաբաշյան Գ. Գ.—ՀՍՍՀ Միևիստրների խորհրդի շինարարության պետական կոմիտեի նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ

2. Առաքելյան Բ. Ն.—ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հնագետ-պատմաբան

Ինչպես վերը նշվեց, տաճարի հարավային հատվածը նստվածք էր տվել. նստվածքի պատճառները պարզելու նպատակով երկրաբանական հետախուզական մի շարք հորեր փորվեցին նաև տաճարի շրջապատում, մասնավորապես դեպի հարավ ընկած տարածքում։ Ստացված հանուկը (կեռնը) ցույց տվեց, որ տվյալ տեղանքն ունի որձաքարի խարամների և կավահողի շերտերի հալորդականություն՝ ստեղծված հուսալի կառուցվածք (ստրուկտուրա)։ Սակայն,



Նկ. 2. Գառնի. անտիկ տաճարի առանձին բեկորներ։

3. Ղաֆազարյան Կ. Գ.—ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հնագետ-պատմաբան
 4. Հովհաննիսյան Կ. Լ.—ՀՍՍՀ պետլինի հուշարձանների պահպանության վարչության պետ, ճարտարապետության դոկտոր
 5. Մնացականյան Ս. Խ.—ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր
 6. Բարսեղյան Լ. Ա.—ՀՍՍՀ պետլինի մշակույթի հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, հնագետ-պատմաբան
 7. Սարգսյան Հ. Գ.—Տեխնիկական գիտությունների թեկնածու, կոնստրուկտոր
 8. Սահինյան Ա. Ա.—ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի բաժնի վարիչ, արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ
- 20-ր հունվարի 1969 թ. Նրեան—Գառնի։

Շինարարական աշխատանքները կատարվեցին Մինիստրների խորհրդի շինարարության պետական կոմիտեի (պետլին) հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության գիտաարտադրական հատուկ արվեստանոցի միջոցով։

Պետլինը (նախագահ Գ. Գ. Աղաբաբյան) ստեղծել էր նյութական ու տեխնիկական բոլոր

անկախ տեղանքի երկրաբանական հետազոտության արդյունքներից, տաճարի պատվանդանի և ցեղայի որմնաքարերի կարանների ընդհուպ միացված վիճակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նստվածքը տեղի է ունեցել տաճարի պատվանդանի շինարարության ժամանակ՝ I դ. և հետագայում այդ երեք վոյթը չի կրկնվել: Հետևապես նախատեսվելիք սիլիկատային ապակու (սիլիկատիզացիայի) կամ մեկ այլ միջոցով հիմքերի լրացուցիչ ամրացման կարիքը չզգացվեց: Միայն պատվանդանի պատերի ամբողջ պարագծով բացվածքին կառույցի սկզբնական հիմքերի արտաքին ճակատները և չորս կողմից երկվեցին երկաթբետոնե ուժեղ գոտիով՝ իսկ արևելյան, հարավային և արևմտյան ճակատները՝ երկաթբետոնե նույն կտրվածքն ունեցող նաև լրացուցիչ երկրորդ գոտիով:

Հակաերկրաշարժային միջոցառումների նպատակով ստեղծված երկաթբետոնե ինչպես այս, այնպես էլ տաճարի տարբեր մասերում իրականացված կոնստրուկցիաները մշակել է հանրապետության ճանաչված կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու Հ. Սարգսյանը:

Տաճարի պատվանդանը, վերականգնումն սկսվեց աստիճաններից, 1930-ական թվականներին շարված վերին չորս շարքերը հեռացնելուց հետո պարզվեց, որ սկզբնական կառուցվածքից պահպանված հաջորդ չորս շարքի քարերը տեղից շարժվել են: Համապատասխան ակտ կազմելուց հետո, համարակալվեցին քարերը և վերաշարվեցին: Պակասող քարերը լրացվեցին Փարաքարի որձաքարով: Աստիճանները հետևի անմշակ ճակատով ագուցվում էին պատվանդանի հարթակի կրաբետոնի մեջ, իսկ սրբատաշ լայնական ճակատներով՝ իրար միացվում մետաղական գամերով:

Գրեթե ամբողջապես քայքայվել կամ պակասում էին պատվանդանի հարավային ճակատի խարիսխների քարերը և տեղահան էին եղել իրանի քարերը: Խարիսխի քարերի մեծ մասը փոխարինվեց նույն ձևանմուշով տաշված նորերով, իսկ իրանի քարերը վերաշարվեցին:

Պատվանդանի քիվի լրիվ քայքայված և պակասող մասերի փոխարեն տեղադրվեցին համանման մշակումով նոր մասեր, իսկ մնացած պահպանված հատվածն ամբողջապես քանդվեց, ճշտվեց յուրաքանչյուր քարի տեղը և ապա նորից շարվեց:

Ցեղայի խարիսխների տակ պահպանվել են արտաքին սալահատակի սալերի շարունակությունները կազմող բոլոր քարերը, իսկ արևելյան ճակատում՝ աղոթասրահի արտաքին պատի ամբողջ երկարությամբ սալահատակի առաջին շարքը. պակասող հատվածը լրացվեց նույն չափերի նոր սալերով:

Ցեղա. պատերի ամբողջ պարագծով ընթացող խարիսխների մի մասը զգալի չափով քայքայված էր. նկատի ունենալով խարիսխների կոնստրուկտիվ նշանակությունը, անհրաժեշտ համարվեց հեռացնել նրանց քայքայված մասերը և նոր քարերով կատարել լրացումներ:

Լրացումները իրականացվեցին հետևյալ ձևով. հին քարերի քայքայված կամ կոտրատված հատվածի հեռացումից և նոր քարի պատրաստումից հետո

պայմանները վերականգնման որակը ապահովելու համար: Ստեղծվեց Գառնիի շինարարական հատուկ տեղամաս. Պետ նշանակվեց տողերիս հեղինակը, որը և անմիջապես ղեկավարում էր կառուցումը: Տեղամասի ընթացիկ մյուս աշխատանքների գծով օգնականներ էին ճարտարապետներ Ռ. Սարգսյանը (1969), Ա. Հարությունյանը (1970), Հ. Գասպարյանը (1971), Վ. Խաչատրյանը (1972), Ա. Արբահամյանը (1973), Ա. Դադյանը (1974—1975):

երկու քարերի համապատասխան մակերեսները մշակվեցին նուրբ ատամնամուրճով. այնուհետև քարերի որոշ խորդուբորդություններ ստացած մակերեսները փափուկ մետաղական վրձինով մաքրելուց և ացետոնով լվանալուց հետո ծածկվեցին էպոքսիդային սոսնձով³ և մեծ ճնշման տակ միացվեցին իրար:

Սոսնձապատումը կատարվում էր շոր մակերեսների վրա, միայն շոր եղանակի (+15°-ից ոչ պակաս ջերմության) պայմաններում: 48 ժամ մնալուց հետո քարերն այնքան ամուր էին միմյանց միանում, որ ծանրամուրճի հարվածի տակ որձաքարի ապարը փշրվում էր, բայց սոսնձով միացված հարթություններն իրարից չէին անջատվում: Քանի որ մինչ հին բեկորին միացնելը, լրացվող նոր քարերի (մանավանդ երբ այն փոքր չափի է) մանրամասների քանդակումը կատարման տեսակետից մեծ դժվարություն է հարուցում, նորի մանրամասները մշակվում էին միայն հին միացնելուց հետո: Հին և նոր քարերի միացմամբ սաացվում էր մեկ ամբողջական մենաձույլ զանգված, որի հին խարսխից սլահսլանված տրամատների շարունակությամբ դյուրությունը քանդակվում էին նորերը: Քանի որ սոսնձի երկարակցությունը դեռևս անհայտ է, հին և նոր քարերը իրար հետ կապվում էին նաև մետաղական կապերով:


Այս եղանակով կատարվեցին տաճարի բոլոր մասերի ու մանրամասների (ոյան բուն, խարխուխ, խոյակ, արխիտրավ, ֆրիզ, քիվ, որմնասյուն, աղոթասրահի որմնաքարեր, թաղի կրունկի քարեր, առաստաղի սալեր, ակրոտերիա և այլն) հին քարերից պակասող հատվածների՝ նոր քարերով լրացումը և մշակումը:

Ինչպես տեսանք, տաճարի պատվանդանի կառուցման ընթացքում, նրա հարավային հատվածը նստվածք էր տվել, որի պատճառով ցեղային պատերի առաջին շարքի վերին մակերեսը ընդհանուր հարթաչափի բերելու նպատակով շարքի որմնաքարերի բարձրությունները հյուսիսից դեպի հարավ աստիճանաբար մեծացվել էին:

Նրկանական թվականների վերականգնման ժամանակ, շարքի քարերը դրնելով ոչ իրենց նախնական տեղերում, իրար մոտ դետեղվել էին տարբեր բարձրության քարեր: Չիմանալով որմնաքարերի բարձրությունների միջև եղած այդ տարբերության պատճառը, տաշել են քարերի «ավելորդ» մասերը և բոլորին տվել միանման բարձրություն: Այդ մասին կազմվեց ակտ և լրացումների («կցոններ») միջոցով վերականգնվեցին բոլոր քարերի սկզբնական բարձրության չափերը և ըստ նրանց ներքևի մասերի տրամատների և մետաղական գամերի ագուցման խոռոչների տեղադրվեցին շարքում զբաղեցրած իրենց սկզբնական տեղերում: Ցեղային հաջորդ շարքերից յուրաքանչյուրի վերականգնման համար նախ տեղադրվեցին անկյունաքարերը և ապա զետեղվեցին անկյունաքարերի միջև ընթացող շարքի նույն ձևանմուշով մշակված համապատասխան որմնաքարերը: Ցեղային հարավ-արևելյան և հարավ-արևմտյան անկյուններում գոտու շարքից վերև գոյություն ունեն տասնմեկ, իսկ ներքև՝ երկու շարք: Պահպանվել են շարքերի բոլոր անկյունաքարերը, բացառությամբ հարավ-արևելյան անկյան տասներորդ և հարավ-արևմտյան անկ-

³ Օգտագործվեցին Նրկանի քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտի ֆիզիկատեխնիկական ուսումնասիրությունների լաբորատորիայի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Դալյանի առաջարկած էպոքսիդային սոսինձը: Սոսնձապատումը կատարվում էր հեղինակի անմիջական մասնակցությամբ:

յան իններորդ շարքերի անկյունաքարերի: Իբրև կառուցողական օրինաչափություն, անկյունաքարերից յուրաքանչյուրի մի կողմը երկար է (0, 75—0, 77 մ), իսկ մյուսը՝ անհամեմատ կարճ (0, 30—0, 31 մ): այդ սկզբունքով որմնասյուների խարիսխից մինչև խոյակը ներառյալ բոլոր անկյունաքարերը (երկար ու կարճ կողերի) մեկընդմեջ կապերով միացվեցին ցելլայի հարավային, արևմտյան և արևելյան պատերի համապատասխան շարքերին: Նույն սկզբունք-



Նկ. 3. Գառնի. անտիկ տաճարի բեկորների դասավորումը մինչ վերականգնումը:

քով են կառուցված նաև անտերի պատերի և ցելլայի հյուսիսային պատի միացման հանգույցները: Հյուսիսային պատն ամբողջությամբ վերականգնվեց զրեթե իր սկզբնական քարերով: Փոքր լրացումներ կատարվեցին միայն պարակալի ուղղածից մասում, իսկ պարակալի հորիզոնական հատվածը՝ մուտքի բացվածքի խորությամբ, կառուցվեց մեկ ամբողջական նոր քարից: Վերջինին արտաքինից կցվեցին հին պարակալի պահպանված բեկորները:

Որպեսզի լրացումներից հետո հին և նոր քարերը ընկալվեն ամբողջական և միաժամանակ լրացվող մասը տարբերվի հնից, նոր քարերի վրա կրկնվեց հին քարերի միայն տրամատների ձևը՝ առանց զարդաքանդակների:

Պարակալի հորիզոնական հատվածի և նրա վերը գտնվող սանդղիկի միջև գոյություն ունի մուտքի բացվածքի լայնությամբ ստեղծված դատարկ տարածություն՝ բեռնաթափող ճեղք, իսկ սանդղիկի և նրա վերը գտնվող սեպածե քարերի միացումով ստեղծված քանդակազարդ բարավորի միջև՝ նույն նպատակին ծառայող, փոքր կորությամբ թաղակապ տարածություն: Չնայած պահպանվել են սանդղիկի բոլոր քարերը, սակայն այնպիսի կոտրատված վիճակում, որ նրանք այլևս չեն կարող կատարել իրենց սկզբնական կոնստրուկ-

տիվ դերը, նկատի ունենալով այդ, նույնությամբ պահպանվեց քանդակագործ ճակատը, իսկ ներսից թաքնված ձևով կառուցվեց երկաթբետոնե (0, 20X0, 40 մ կտրվածք ունեցող) հեծան, որին մետաղական կապերի միջոցով միացնելով հին քարերի բեկորները, վերականգնվեց սանդղիկի կոնստրուկտիվ դերի իրականացումն ապահովող սկզբնական հորինվածքի իրական պատկերը, նույն նպատակով, նույնությամբ պահպանվեց սանդղիկի վերևից ընթացող բարավորի արտաքին ճակատի սկզբնական տեսքը և բարավորի պատի միջուկում ստեղծված երկաթբետոնե հեծանի ամրաններին հին քարերը կապելու շնորհիվ լրիվին ապահովվեց նաև բարավորի սկզբնական հորինվածքի կոնստրուկտիվ դերի իրականացումը:

Ամբողջապես իր սկզբնական քարերով վերականգնվեց պատերի արտաքին պարագծով ընթացող քանդակադարձ գոտին:

Ընդ որում որմնաքարերը հորիզոնական ուղղությամբ իրար հետ կապվում էին երկաթյա զամերով և ամրացվում կապարով, իսկ ուղղաձիգ ուղղությամբ վերին շարքի ամբողջ բարձրության և ներքևի շարքի բարձրության $\frac{1}{3}$ -ի չափ 3 սմ տրամագծով անցքեր էին փորվում և ձողը ագուցելուց հետո ամրացվում ցեմենտի (400 մարկայի) շաղախով: Այս եղանակով, խարիսխից մինչև քիվը վերականգնվեցին ցելլայի պատերը, որոնց իսկությունը մեծապես պայմանավորված է այն բանով, որ որմնաքարերի արտաքին ճակատները (արևմտյան, արևելյան և հարավային պատերի բարձրության $\frac{1}{3}$ -ից սկսած) մշակված են որմնասյուների կառուցվածքին համապատասխանող «դեպի վեր նեղացում» ունեցող ձևանմուշով, և ուղղակի անհնարին է որևէ շարքի քար զետեղել մեկ ուրիշ շարքում:

Պակասում էր որմնաքարերի շուրջ $\frac{1}{3}$ մասը, որը լրացվեց Գառնիի որմնաքարերով: Պաշտվող կուռքի խորշից պահպանվել են 13 քար. պակասող քարերը լրացնելով նորերով, ամբողջությամբ վերականգնվեց նաև ցելլայի այդ հանգույցը:

Ցելլայի ծածկը. հարավային և հյուսիսային պատերի վերևի շարքերից պահպանված քարերի հզորագծերի կորուստի հիման վրա ստույգ որոշվել էր, որ թաղն ունի գլանաձև (կիսաշրջանաձև) հորինվածք, շառավիղը հավասար է 2, 525 մ և կորի կենտրոնը գտնվում է կրունկի քարերի վերին եզրից 2,5 սմ բարձր: Ցելլայի արևմտյան և արևելյան պատերի ամբողջ երկարությամբ պահպանվել էին թաղի կրունկի բոլոր հին քարերը, որոնք չնչին լրացումներով վերականգնվեցին իրենց նախնական տեղերում¹. այնուհետև նույն հորիզոնի ուղղությամբ զետեղված հյուսիսային և հարավային պատերի քիվի վրա բարձրացվեցին թաղի կարճ ճակատները եզրափակող ուղղաձիգ պատերը և վերջինների միջև ստեղծված փայտյա ողնարկի (крыжало) վրա հաջորդաբար հավաքվեցին թաղի մյուս որմնաշարքերը՝ երդիկի բացվածքով հանդերձ: Բացի երդիկի սկզբնական կառուցվածքից պահպանված մեկ և թաղի ուղղաձիգ պատերի կորագիծ վերջավորության մի քանի հին ամբողջական բեկորներից, թաղի կրունկից վեր գտնվող հատվածը լրացվեց նոր քարերով: Թաղի շարքի բարձրության համար, ընտրվեց ցելլայի ամենափոքր բարձրություն ունեցող շարքի՝ 0,425 մ չափը, քարերի երկարության համար՝ տաճարի որմնաքարերի

¹ Պակասում էր միայն արևելյան ճակատի հարավային եզրի մեկ քարը, որը լրացվեց նորով:

երկարության 1,5 մոդուլ (1,05 մ) չափը, իսկ երդիկի քիվի համար՝ կառույցի համանման բոլոր մանրամասներում հանդիպող՝ «կրունկի» ձևը:



Նկ. 4. Գառնի. հատված տաճարի արևմտյան ճակատից:

Սյունաշարերը մեզ են հասել բոլոր իարիսխները, որոնցից տասը գրեթե անաղարտ, ութից պահպանվել է յուրաքանչյուրի $\frac{1}{3}$ — $\frac{2}{3}$ մասը, իսկ վեցը՝ դամբրի ագուցման խոռոչների մեջ գտնվող կապարը դուրս հանելու նպատա-

կող տարրեր տեղերից ջարդվել են և աստիճանաբար ավելի քայքայվել: Վերջինները փոխարինվեցին նորերով, որոնցից յուրաքանչյուրի մշակման համար հիմք հանդիսացան փոխարինվելիք հին խարիսխի վրա պահպանված տրամատների մնացորդները, իսկ մյուս խարիսխների պակասող մասերը լրացվեցին Փարարարի որձաքարով:

Սյունասրահի սալահատակի արտաքին ճակատների բարերը (որոնց վրա պետք է փորված լինեին խարիսխները հատակին միացնող դամբրի խողունները) չեն պահպանվել: Հետևապես անհայտ է խարիսխներից յուրաքանչյուրի ստույգ տեղը: Բայց քանի որ արևմտյան, մասամբ արևելյան սյունասրահների հատակի վերին մակերեսները կուրվառուրայի հետևանքով մի հորիզոնի վրա չեն գտնվում և այդ պատճառով ցելլայի միանման մշակում ունեցող արտաքին խարիսխ տարբեր մասերում ստացել է տարբեր բարձրություն, ապա սյուների (միմյանցից տարբեր բարձրություն ունեցող) խարիսխների տեղադրումը կատարվեց ցելլայի խարիսխի տարբեր հատվածների բարձրություններին համեմատ:

Սյունաշարքերի անկյուններում տեղադրվեցին նոր խարիսխներ:

Որմնասյուների, անտերի և սյունաշարքերի անկյունային խոյակները գրեթե առանց միջամտության դրվեցին իրենց սկզբնական տեղերում: Միջսյունային խոյակների զգալի մասը նույնպես տեղադրվեց նույնությամբ: Մնացածներից մի մասում կատարվեցին առանձին լրացումներ, իսկ երկու խոյակ, որոնք գտնվում էին քայքայման այնպիսի վիճակում, որ անհնարին էր օգտագործել, փոխարինվեցին նորերով, պահպանելով հին խոյակներից յուրաքանչյուրի չափն ու մանրամասների ձևը: Միջսյունային խոյակներից մեկը ցուցադրված է էրմիտաժում (Լենինգրադ): Որոշվեց այն թողնել թանգարանում, իսկ համապատասխան սյան վրա տեղադրել նրա պատճենը⁵: Մշակվեցին նոր խոյակների միայն գլխավոր (խոյուններով) ճակատները, իսկ բարցիկները քանդակվեցին սխեմատիկ, առանց զարդաքանդակների:

Եթե սյուների նոր խոյակները և խարիսխները կազմում են համեմատաբար ոչ մեծ քանակություն, ապա բնի (ֆուստի) քարերի շուրջ 40%-ը նոր է: Տաճարի ամբողջական սյուներից իրենց նախնական բոլոր մասերով պահպանվել են միայն երկուսը, որոնք տեղադրվեցին գլխավոր ճակատի կենտրոնական հատվածում: չորս սյան բնի քարեր՝ նոր են, իսկ մնացածներից—տարբեր սյուների ստացան տարբեր քանակի լրացումներ:

Գառնիում սյան ներքևի տրամագծի հավասար է 0,692 մ, իսկ դեպի վեր աստիճանաբար մեծանալով, սյան ներքևից հաշված $\frac{1}{3}$ բարձրության վրա, այն դառնում է 0,704 մ և հետո «դեպի վեր նեղացման» հետևանքով սկսում է նորից նվազել⁶: Մենք նոր քարերի տրամագծի համար սյան ներքևից հաշված ամբողջ $\frac{1}{3}$ բարձրության վրա պահպանեցինք միանման 0,704 մ չափը:

Նոր տաշվելիք քարերի «դեպի վեր նեղացման» ձևանմուշը պատրաստվեց հետևյալ եղանակով: Գառնիում բոլոր սյուների բունը կազմված է գրեթե հաս-

⁵ Եթե երբևէ անհրաժեշտ համարվի հին խոյակի տեղադրումն իր սկզբնական տեղում, մենք մշակել ենք այն իրականացնելու համապատասխան գծագիր:

⁶ Պահպանվել են 19 սյուների բնի 1,704—1,858 մ բարձրություն ունեցող ներքևի մասերը, բնիից տասնչորսի վրա ճշտությամբ որոշվում են ներքևի և վերևի տրամագծերի չափերը:

տատուն չափեր ունեցող չորս կտոր քարից: Իբրև նմուշ րնտրեցին: Եւստիւս Դաւիթի արեւմտյան եզրից հաշված երրորդ սյունը և հարթակի վրա դնելով սյան ուղղաձիգ առանցքի ուղղութիւնը, նրա վրա հաջորդաբար նշեցինք բնի քարերի բարձրութեան չափերը: Այնուհետև յուրաքանչյուր հատվածից դեպի աջ տեղադրելով տվյալ քարի շառավիղի չափը, ստացանք այն կետերը, որոնքով անցնում է «դեպի վեր նեղացման» աղեղի կորը: Կորի կառուցումն իրականացվեց Պալլադիոսի առաջարկած եղանակով. նա անդադառնալով «դեպի վեր նեղացման» աղեղի ստացման Վիտրուվիոսի հիշատակութեանը⁷, գրում է. «Սակայն, քի ինչ ձևով է արվում... մենք նրա մոտ ոչինչ չենք գտնում, բացի խոստումից, այդ իսկ պատճառով ամեն մեկն այն բացատրում է յուրովի»:

Ապա Պալլադիոսն նշում է, որ ես այսպես բունդ բաժանում եմ երեք հավասար մասերի և թողնելով ներքևի երրորդը ուղղաձիգ, նրա եզրին հպում եմ սյան երկարութեան չափի կամ մի փոքր ավելի բարակ քանոնի կողը և ծնելով քանոնի—սյան ներքևի երրորդից վեր ցցված մասը, նրա ծայրը հասցնում մինչև սյան ամենաբարակ տեղը, մինչև վզիկի տակ և գծում ստացված աղեղը⁸:

Դառնիւմ նոր տաշվելիք սյան բնի ներքևի $1/3$ մասը պահպանելով ուղղաձիգ, փայտյա «բարակ քանոնի» կողը կպցվեց բնի առանձին քարերի միացման հանգուցների վերը նշված կետերին և ստացված աղեղի կորութեամբ պատրաստվեց սյան բնի «դեպի վեր նեղացումը» վերարտադրող «ձևանմուշը»: Սյան բնի առանձին քարերից պակասող յուրաքանչյուրի երկարութեան և ներքևի ու վերևի տրամագծերի չափերը որոշելով՝ ճշտութեամբ վերարտադրվում էր նրանց նախնական տեսքը և լրացվում սյան համապատասխան մասը⁹: Արխիտրավներին տասը պահպանվել էին ամբողջական վիճակում, երեքը՝ նոր տաշվեցին, իսկ մյուսները կտրված էին մի քանի տեղից, երեքմե բաժանված ավելի շատ մասերի:


⁷ Витрувий. Десять книг об архитектуре. М., 1936. кн. 3, էջ 71:

⁸ Палладио. Четыре книги об архитектуре. М., 1936, кн. 1, էջ 25 (տե՛ս նույն տեղում նաև գծագիրը):

⁹ Վիտրուվիոսը սյունաշարի տարբեր մասերում գտնվող սյուների մասին գրում է. «Միջին սյուները, տաճարի առջևի և հետևի մասերում, ուղղաձիգ են իրենց սեփական առանցքին, իսկ անկյունային սյուները և նրանք, որոնք գնալու են դռանցից դեպի տաճարի աջ և ձախ կողմերը, այնպես [պետք է անել], որպեսզի ուղղաձիգ լինի նրանց կողը ներսի կողմերից, որոնք ուղղված են դեպի ցելլայի պատերը. իսկ նրանց արտաքին կողմերը պետք է, ինչպես մատնանշվեց. ունենան նեղացում» (Витрувий, նշվ. աշխ., էջ 73): Դառնիւմ, ինչպես ցույց տվին ուղղաշարով նրանց բարձրության ուղղութեամբ կատարված ստուգումները, որոնք սյուներն իրենց սեփական առանցքի նկատմամբ ուղղաձիգ են: Այդպես են պատկերված նաև Կ. Ռոմանովի (տե՛ս «Развалныя храма римского типа в Бази-Гарни...», сборник статей к сорокопятилетию научной деятельности Н. Я. Марра, М.—Л., 1933, էջ 639, նկ. 1) և Ն. Ռուսիայանի (տե՛ս «Эксплуатация тавары Среда тавары պալատին կից Դառնի ամրոցում», Երևան, 1933, էջ 37, նկ. 7) Դառնի տաճարի վերակազմութեան նախագծերում:

Այդպիսի կառուցվածք ունեն Պալլադիոսի մոտ ներկայացված անտիկ տաճարի անկյունային և նրանց աջ ու ձախ կողմերից ընթացող (երկայնական ճակատների) սյուները (Палладио, նշվ. աշխ., кн. 4, гл. 31, էջ 130, 131—132): Միջինական համանման հուշարձաններին՝ Բաալբեկի Բաքոսի տաճարի սյուները (D. Krencker, T. von Lüpke, H. Winnefeld, Baalbek;... Berlin und Leipzig, 1923, B. 2, Tafel 7, Tafel 14); Փոքր ասիական հուշարձաններին՝ Սաղալասի տաճարի սյուները (Ch. Lankoronski, C. Niemann et E. Petersen, Paris, 1893, v. II, Planche XXV) և այլն:

Նոտրված արխիտրավների բեկորները սոսնձով իրար միացնելուց հետո արխիտրավների 0,88—0,90 մ լայնություն ունեցող վերևի հարթությունների



Նկ. 5. Դառնի. վերականգնված տաճարը:

մեջտեղից փորվեցին և տեղադրվեցին 0,20×0,40 մ չափի կտրվածք ունեցող երկաթբետոնե հեծանի համապատասխան ամրաններ, և ապա բոլոր բեկորները մետաղական կապերով ամրացվեցին այդ ամրաններին: Նույն հորիզոնի ուղղությամբ նույն չափով փորվեցին և նույնպիսի ամրաններ տեղադրվեցին նաև ամբողջական արխիտրավների վերին մասում և այդ բոլորը կապելով միմյանց հետ, առնվեցին բարձր մարկայի բետոնի շաղախի մեջ: Ստեղծվեց սյունաշարքերի արխիտրավների ամբողջ պարագծով ընթացող երկաթբետոնե միաձուլ գոտի, լիովին պահպանելով արխիտրավների սկզբնական արտաքին տեսքը: Երկաթբետոնե համանման գոտի ստեղծվեց ցելլայի պատերի, ցելլայի հարավային որմնասյուներից դեպի հարավ և անտերից դեպի հյուսիս նետված արխիտրավների վրա, և այդ ամենը միացնելով սյունաշարքերի արխիտրավների վրայից ընթացող գոտու հետ՝ կազմվեց հսկաներկաշարժային միասնական համակարգ:

Սյունասրահների առաստաղի քանդակազարդ սալերը, որոնք տաճարի յուրաքանչյուր ճակատին համեմատ հաջորդաբար դասավորված էին գետնի վրա, մի քանի սալերի փոքր լրացումներից հետո նույնությամբ բարձրացվեցին և տեղադրվեցին՝ մի ծալրով արխիտրավների վերին հարթության ներսի կողմի կեսի, մյուսում՝ ցելլայի համապատասխան պատերի վրա:

Արխիտրավների վերին մակերեսի մյուս կեսի վրա վերականգնվեցին ֆրիզի շարքերը: Նստիվ պահպանվեց նրանց նախնական հորինվածքում կիրառ-

ված կառուցողական սկզբունքը. ֆրիզի մեկական քար դրվեց երկու արխիտրավների միացման հանգույցի համապատասխան հարթության վրա, իսկ նրանց միջև զետեղվելիք «փական»-ի քարը այնպես ագուցվեց, որպեսզի պահպանվի ֆրիզի տվյալ հատվածի և արխիտրավի միջև կոնստրուկտիվ անհրաժեշտություն կազմող դատարկ տարածությունը: Մի քանի նոր քարերով լրացվեցին հարավային, մասամբ հյուսիսային ճակատների շարքերը. գրեթե անազարտ վիճակում է արևմտյան անտաբլեմենտի ֆրիզը:

Եթե տաճարի հյուսիսային և հարավային ճակատներում քիվի քարերի որոշ մասը լրացվեց նորերով, ապա արևմտյան և արևելյան ճակատների երեսուն քարից պակասում էր միայն երկուսը: Ֆրիզի նման քիվի քարերը նույնպես շարվեցին որոշակի օրինաչափությամբ. յուրաքանչյուր սյան ուղղաձիգ ուղղությամբ դրվեցին մեկական քար և նրանց միջև ագուցվեց «փականի» քարը: Քարերն ունեն մեծ խորություն. դրվելով ֆրիզի վրա, ծածկում են նաև առաստաղի համապատասխան սալի զգալի մասը:

Տաճի Գետնի վրա, ուղղաձիգ վիճակում ճակտոնները հավաքելուց հետո, նույնությամբ, առանց քարերը մետաղական կապերով ամրացնելու, փորձնական ձևով դրանք տեղադրվեցին համապատասխան ճակատներում և ստուգելով յուրաքանչյուր ճակտոնի ընդհանուր հորինվածքում ամեն մի քարի զբաղեցրած նախնական վիճակի իսկությունը, նորից իջեցվեցին գետնի վրա. որպեսզի հետո շարք առ շարք բարձրացվեն ու անվրեպ ամրացվեն իրենց տեղերում: Ճակտոններից պակասում էին միայն տիմպանների սլատերի առանձին քարեր: Տեղադրվեցին ճակտոնների սկզբնական անկյունաքարերը, նոր քարերով լրացվեցին տիմպանների պատերը և վերջինների եռանկյան լանջի ամբողջ երկարությամբ զետեղելով քիվի հին քարերը, վերականգնվեցին ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային ճակտոնների նախնական կառուցվածքները:

I դ. նախամուտքի հարթ առաստաղի վերևում՝ ցելլայի քարաշեն թաղի շարունակությամբ, կառուցվել էր քարաշեն մի նոր թաղ և երկու թաղերի երկարությամբ ստեղծվող երկլանջ տարածությունը՝ հյուսիսային ճակտոնից մինչև հարավային ճակտոնը ներառյալ, ծածկվել հրաբխային թևթև, ծակոտկեն քարի (չեչաքարի) համակցությամբ պատրաստված կրաշաղախով: Վերականգնման ժամանակ քարաշեն թաղը ծածկվեց՝ ճակտոնների երկթեք կողերին զուգահեռ տարված մետաղական ցանցով և տանիքի ամբողջ երկարությամբ ստեղծվեց երկաթբետոնի (0,08 մ հաստությամբ) թաղանթ:

Տանիքի սկզբնական սալերից (солен) և կալիստերներից պահպանվել են բազմաթիվ բեկորներ, սակայն՝ և ոչ մեկը ամբողջական: Մենք սալերի երկարության չափը որոշեցինք ճակտոնների քիվերի վրա սալերի ուղղաձիգ ձողերի խոռոչների միջև եղած չափերի հիման վրա (0,72 մ), իսկ լայնությունը՝ երկայնական ճակատների քիվերի վրա գոյություն ունեցող հետքերի (0,53): Սալերը նույնպես տեղադրվում են որոշակի սկզբունքով: Երկայնական ճակատների քիվի քարերը անկյուններում ունեն 2 մոդուլ, իսկ մնացած մասում 1,5 մոդուլ երկարություն. մեկական զույգ սալեր տեղադրվեցին քիվի քարերի միացման կարանների, իսկ մեկ զույգ սալ՝ նույն քարերի կենտրոններում ստեղծված առյուծի գլխի քանդակի ուղղաձիգ առանցքի ուղղությամբ: Ինչպես սալերը, այնպես էլ նրանց ելունների միացման հանգույցների վրա ագուց-

վաճել կայսրությանը տալիս շատ անհաշիվ անհատական երկուական ուղղորդող ձեռքերի միջոցով:

Հակառակ դեպքերի և անկյունքների վրա պահանջներ են ակրոտերիանների տեղադրման հարթակները ու նրանց վրա ուղղաձիգ կապերի խոտոչնչությունը: Տաճարի ավերակների բեկորների մեջ պահպանված ականթի տերևով և գույնի բարր ¹⁰ Բուսանովը տարակուսանքով նմանեցնում էր ակրոտերիանների ¹¹ Կ. Տրեքերը այն գիտնում էր իբրև ակրոտերիա ¹² Նույն անսակեպին էր նաև Ն. Բուսանովը, որը, — գրում է նա, — գաղափար վրա և ճակտոնի անկյուններում նախագծելու միջոցին պարզվեց նրա անհամապատասխանությունը ընդհանուր ճակատի վերաբերմամբ: Ուստի ես հրաժարվեցի այդ մտքից և ականթի նշանակությունն ինձ համար մնաց չլուծված գաղտնիք ¹³ Նույն ժամանակաշրջանի նույնատիպ հուշարձանների վրա համանման մշակում ունեցող ակրոտերիանների գոյություն հիման վրա ¹⁴ մենք նույնպես հակված էինք այդ բարր դիտել իբրև ակրոտերիա:

Տաճարի վերակազմության նախագծի մշակման ընթացքում կատարվող մասնակի պեղումների ժամանակ, տաճարի հյուսիս-արևմտյան անկյունից մոտ 20 մ դեպի հյուսիս, գտանք ականթի տերևի ճիշտ և ճիշտ նույն մշակումն ունեցող անկյունային ակրոտերիայի բար, որը անվերապահորեն հասառանց վերը հիշատակած բարը ակրոտերիա դիտելու տեսակետներով: Ելնելով այդ բարերի յափերից, ձևից և զրանց վրա գոյություն ունեցող մետաղական գամերի հեռավորից, մեծ տեղադրվեց հյուսիսային ճակտոնի գագաթին, փոքրը՝ նույն հակառակ արևմտյան անկյունում:

Այսպիսով, պատվանդանից մինչև ակրոտերիան ամբողջությամբ վերականգնվեց տաճարի ինչպես հատակագծային, այնպես էլ տարածական-ծավալային սկզբնական կառուցվածքը: Շինարարությունը սկսվեց 1969-ի հունվարին, ավարտվեց 1975-ին:

ВОССТАНОВЛЕНИЕ АНТИЧНОГО ХРАМА ГАРНИ

АЛЕКСАНДР САИНЯН

Резюме

Постановлением правительства Армянской ССР (декабрь 1968 г.) был восстановлен античный храм в Гарни (I век). Храм стоял в сохранности до XVII века и был разрушен землетрясением 1679 года. После первого проекта реконструкции храма Фредерика Любуа де Монперё (1834 г.) последовали проекты реконструкции К. К. Романова (1912 г.) и проф. Н. Г. Буниатяна (1933 г.). В 1968 году на основе новых материалов, полученных исследованиями последних лет, нами был состав-

¹⁰ К. К. Романов, *узг. աշխ.*, էջ 649.

¹¹ К. В. Тревер, *Очерки по истории культуры древней Армении*, М.,—Л., 1953, էջ 51.

¹² Ն. Բուսանով, *узգ. աշխ.*, էջ 13.

¹³ В. Schulz und H. Winnefeld, *Balbek*,... B. 1, Berlin und Leipzig, 1921, Tafel 22; D. Krencker, T. von Lüpke, H. Winnefeld, *Baalbek*,... B. 2, Berlin und Leipzig, 1923, Tafel 62:

лен новый проект реконструкции, по которому под руководством автора было осуществлено восстановление храма (1969—1975 гг.). Строительство начали с того уровня, который существовал во время раскопок Н. Марра. Параллельно с исследовательской работой были собраны на земле все конструктивные узловые части памятника в первоначальном виде.

Все без исключения старые камни были использованы. Недостающие дополнялись камнями из того же (гарнийского) базальта, с тождественными профилями, но без украшений. Строительная техника — та самая, которая была применена в первоначальном сооружении храма. Обломки камней соединялись с помощью специального клея (эпоксидная смола), но так как долголетие клея неизвестно, одновременно применялись и железные скобы.

Таким образом, первоначальный вид храма от подпума до акротерии был полностью восстановлен.